

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈԶ ՀՈՂՔՈՂԵԿՈՄԱՏ
ԱՆՍՈՒԱՊԱԿԱՆ ՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԴ

ԱՆԱՐԱՏ ՅԵԼ ԶՏԱԾ ԿԱԲԻ
ԱՑԻԴՈՖԻԼԻՆՈՎ ՄԱԿԱՐԴԵԼՈՒ ՅԵԼ
ՀՈՐԹ ՈՒ ԽՈԶԿՈՐ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ





ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ
ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

636.084
0

ԱՏՈՒԿՎԱԾ է 1981



ԴԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱԶԱՆԳ

ԱՆԱՐԱՏ ՅԵՎ ԶՏԱԾ ԿԱԲՆ
ԱՅԻԴՈՑԻԼԻՆՈՎ ՄԱԿԱՐԴԵԼՈՒ ՅԵՎ
ՀՈՐԹ ՈՒ ԽՈՑԿՈՐ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մօակված և Սիրիցի անտանապահական գիտակու-
ռազմական ինստիտուտի նյութերի հիման վրա՝ Արևմբեյան
Սիրիցի մարզային հողքածնի անտանապահական
վաշտուրյան լև Արևմբեյան Սիրիցի կարճափորձնական
լաբորատորիայի մասնակցուրյամբ



ԳՅՈՒՂՋՐԱՏ ● 1937 ● ՅԵՐԵՎԱՆ

Временная инструкция по приготовлению и скармливанию
свежевыделенного ацидофилинного молока и обрата телятам
и поросятам

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱԶԱՆԳ՝
ԱՆԱՐԱՏ ՅԵՎ ԶՏԱԾ ԿԱՔՆ ԱՑԻԴՈԹԻԼԻՆՈՎ
ՄԱԿԱՐԴԵԼՈՒ ՅԵՎ ՀՈՐԹ ՈՒ ԽՈՃԿՈՐ
ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱԳԻԴՈՑԻԼԻՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հորթերի դաստիարակման կաթնային շրջա-
ռաւմ տեղի ունեցող անկումների հիմնական պատ-
ճառը՝ թոքային հիվանդություններին հափառա-
քապես՝ նաև ստամոքսա-աղիքային հիվանդու-
թյուններն են։ Հորթերի մեջ հիվանդություններն
ամենից հաճախ լերեան են գալիս գարնանն ու
ամռանը, յերբ դժվար ե լինում բացարձակ թարմ
վիճակում անարատ ու զտած կաթ պահել։ Բավա-
կան է հորթին կերակրել թեկուղ փոքրինչ թթված
անարատ կամ զտած կաթով, և նա անպայման
աղիքների գործունեյության խանգարում (լուծ)
կտտանա։ Ստամոքսաղիքային հիվանդություն-
ների գեմ պայքարելու գործում կոլտնտեսական
կմթերից ու խորհունտեսություններից շատերը
հորթ կերակրելու համար, դիտահետազոտական
հիմաքիների փորձերի հիման վրա, մեծ հաջո-

դությամբ ոգտագործում են ացիդոֆիլինով մակարդած անարատ և զտած կաթը:

Ացիդոֆիլինով մակարդած անարատ կամ զտած կաթով հմտորեն կերակրելու և պրոֆիլակտիկ մյուս պայմանները պահպանելու դեպքում շատ բարեհաջող հետևանքներ են ստացվում։ Ստամքսաղիքային հիվանդացումներն ու անկումը դադարում են, հորթերն սկսում են ավելի բարձր որական աճ տալ։ Նույն արդյունքներն ստացվում են և խոճկորների նկատմամբ։ Բացի դրանից, նկատված է, վոր խոճկորներին ացիդոֆիլինով մակարդած անարատ կամ զտած կաթով կերակրելու դեպքում նրանք պարատիֆով ավելի քիչ են հիվանդանում։ Ացիդոֆիլալին միկրոբը կաթնաթթվային մանրեների (բակտերիաների) շարքն է դասվում։ Այս մանրեներն ացիդոֆիլինով մակարդած անարատ կամ զտած կաթի հետ ընկնելով կենդանու աղիքները և այնտեղ կաթնաթթու առաջ բերելով՝ աղիքային հիվանդություններ հարուցող նեխման մանրեների վրա կործանիչ կերպով են ազդում ու վոչնչացնում են նրանց։ Այսպիսով, կաթնաթթուն աղիքների համար լավ ախտահանիչ միջոց է։ Բացի այդ, զտած ու մակարդած կաթի մեջ յեղած մեծ քանակությամբ կաթնաթթվային մանրեները նպաս-

տում են անասունի ստացած կերի մննդանյութերը շատ լավ յուրացնելուն:

Չտած և ացիդոֆիլինով մակարդած կաթ ստացող հորթերի ու խոճկորների կղկղանքի հետազոտությունները հաստատել են, վոր ազիքային հիվանդություններ հարուցող մանրեների աճը դադարում եւ:

Հորթերի ու խոճկորների ստամոքսային տրակտում ացիդոֆիլինի մանրեներն ավելի կայուն են լինում, քան կաթնաթթվային այլ տեսակի մանրեները (ինչպես, որինակ, ստրեպտոկոկի և այլն):

ԱՑԻԴՈՖԻԼԱՅԻՆ ԱՆԱՐԱՏ ՈՒ ԶՏԱԾ ԼԱՎՈՐԱԿ ԿԱԹ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ստամոքսային հիվանդությունների դեմ պարբեր գործում դրական արդյունքներ եւ տալիս միայն ացիդոֆիլինով ճիշտ մակարդած անարատ ու զտած կաթը:

Ացիդոֆիլային անարատ ու զտած կաթ պատրաստելու կանոնները չպահպանելուց ստացվում եւ անորակ մթերք, վորը կարող եւ միայն մսաս բերել:

Ուստի ացիդոֆիլային անարատ ու զտած կաթ պատրաստելու աշխատանքի համար պահանջվում

Ե Փերմայում բարեխիղճ, ճշտապահ ու միանգամայն գրադետ մարդ նշանակել, վոր պանրա-յուղագործարանի փորձված անձնավորության մոտ կամ հատուկ կուրսերում նախապես միջաբաթյա պատրաստման դասընթաց պետք ե անցնի:

Ացիդոֆիլային զտած կամ անարատ կաթ պատրաստելու համար պետք ե սարքավորել միանգամայն մեկուսացրած, մոտավորապես 3×4 մետր տարածություն ունեցող մի փոքրիկ սենյակ:

Կերի բաժանմունքում ացիդոֆիլային անարատ և զտած կաթ պատրաստել չի կարելի: Այս սենյակում, վորտեղ ացիդոֆիլային անարատ և զըպած կաթ ե պատրաստվում, շենքն ու ջեռոցը մըշտապես տաք պահելու համար աղյուսե վառարան, պետք ե լինի: Ջեռոցը տաքացրած ու կափարիչավոր, յեռակող մի մեծ արկղ ե, վոր ընդհուպ կպցնում են վառարանին:

Արկղի չորրորդ կողին փոխարինում ե վառարանի պատը, վոր արկղի մեջ տաքություն և տուաջացնում: Այդ ջեռոց-արկղի մեջ դրվում են զըպած կամ անարատ մակարդած կաթ լցրած ֆլյագ-ներ կամ ունկանոցներ (յատ): Ջեռոցում պետք ե պահպանել կայուն բարեխառնություն (8ելսիուսի 37⁰): Այս պատճառով ել ջեռոցը լավ

պետք ե տաքացնել: Անհրաժեշտ է նաև պաղ
ջրի ու սառցի համար ունենալ կոճղերից արգու-
ցի (ապուր) ձեռվ շինված փայտե մի արկղ
(ավազան): Զեռոցի և ավազանի տարողությունը
պետք ե համապատասխանի ունկանոցների բարձ-
րությանը: Ավազանի հատակին նոսր, կլորաց-
րած ձողերից պատրաստած շարժական մի վահան
եղրվում, վոր ֆլյագները և ունկանոցները սառցը-
նող ջուրը նրանց հատակի տակն անցնի: Ոգ-
տագործված ջուրը բաց թողնելու համար արկղի
տակ խցանով փակվող մի անցք են թողնում:

Եենքը, ամանեղենն ու ամբողջ արտա-
դրությունը սանիտարական գրության մեջ պահե-
լու համար անհրաժեշտ ե կալցինացրած և կառա-
տիկական սողայի ու կրի մշտական պաշար որ-
նենալ:

Եենքը պետք ե սպիտակացվի կրի թեժ լու-
ծույթով և ամիսը մեկ անգամից վոչ պակաս:
Լուծույթին անհրաժեշտ ե 4—5% կառաստիկա-
կան սողա խառնել:

Ամեն որ, հատակները լվանալուց հետո, թարմ
հանգած կրով նորից պետք ե վողողել և $\frac{1}{2}$
մետր բարձրության վրա պատերն սպիտակեցնել:

Անագած մետաղե ամանները պետք ե լվա-
նալ սողայի 5 տոկոսյա լուծույթով, հետո հող-

մահարել և արևի կամքամու տակ չորացնել,
իսկ գործածելուց առաջ յեռման ջրով վողողել:

Սառցի համար յեղած փայտե ավազաններին
ամիսը յերկու անգամ կրի լուծույթ պետք ե
քսել և 5—6 ժամից հետո տաք ջրով լվանալ:
Ավազանի միջի ջուրն առնվազն որբմեջ պետք ե
փոխել:

Ացիդոֆիլինով՝ մակարդած անարատ և զտած
կաթ պատրաստելու համար յեղած շենքը պետք
է պահել միանգամայն մաքուր վիճակում: Այդ
շենքը կարող է մուտք գործել միայն ացիդոֆիլա-
յին անարատ և զտած կաթ պատրաստող անձ-
նավորությունը: Բացի այդ, միանգամայն մաքուր
վիճակում պետք է պահպեն զտած կաթն ու
կաթնամանները, ինչպես և անհրաժեշտ ջերմաս-
տիճան պետք է պահպանվի մակարդ պատրաս-
տելու և պահելու ժամանակ:

Սառցի պաշար ունենալը, մանավանդ ամ-
ռան սեղոնին, պարտադիր ե: Միայն այդպիսի
պայմաններում կարելի յե ապահովել բարձրորակ
ացիդոֆիլային անարատ և զտած կաթի ստացում:

❖ առ որուր յուն. — Այնուեղ, ուր պայման-
ները թույլ են տալիս, մակարդը պետք է պատ-
րաստել ու զտած կաթը մակարդել անմիջապես
լուղագործարանում կամ վերջնիս բաժանմուն-
քում, և կԱֆում մթերքն ստանալ արդեն
պատրաստի վիճակում.

ՄԱԿԱՐԴԱԾ ԱՆԱՐԱՏ ԿԱՄ ԶՏԱԾ ԿԱԹ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մակարդած անարատ կամ զտած կաթ պատրաստելը յերկու հիմնական պլրոցես ունի.

ա) մայրական (սկզբնական) մակարդ պատրաստելուց ու վերջնիցս արդեն փոխմակարդ (պերսաճկա) կատարելուց.

բ) հորթերին կամ խոճկորներին անմիջապես խմցնելու համար գործադրվող անարատ կտմ զտած կաթը մակարդելուց:

1. ՄԱՅՐԱԿԱՆ (ՍԿԶԲՆԱԿԱՆ) ՄԱԿԱՐԴ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մայրական մակարդ պատրաստելու համար վերցնում են 4 լիտր բացարձակ թարմ, անարատ կամ զտած կաթ՝ 16—19 աստիճան թթվությամբ ըստ Տերների. 19 աստիճանից ըարձր թթվություն ունեցող զտած կաթը մակարդ պատրաստելու համար անպետք ե: Վատորակ ու զտած կաթից պատրաստած մակարդը կարող է միայն ժամանակակից լինել:

Չորս լիտր զտած կաթը, յեռապատիկ ծալած թանգիֆով կամ բամբակե հատուկ շրջան ակներով (կրոյչկի) լավ քամում են մետաղե անաղարտ, մաքուր անագած ունկանոցի մեջ: Հետո զտած կաթը Ցելսիուսի 85—90 աստիճան ջերմությամբ 30 րոպե տաքացնելով՝ պատե-

րիզացիայի յեն յենթարկում, վորի ընթացքում
մուտովկայով շարունակ խառնում են:

Համապատասխան հարմարություններ չլի-
նելու դեպքում անարատ կամ զտած կաթը 10
րոպե լավ պետք եր յեռացնել:

Պատարիզացիայի ժամանակ զտած կաթի
յերեսին գոյացող փրփուրը վերցնում են. պատ-
երիզացիայի յենթարկվող զտած կաթը չկեղ-
տոտելու համար մուտովկան ունկանոցից չեն
հանում: Ձերմաստիճանը վորոշում են փայտե
շրջանակ չունեցող ջերմաչափով: Պատերիզա-
ցիայից հետո զտած կաթն անմիջապես և արագ
պաղեցնում են մինչև ջելսիուսի 37—40 աստի-
ճան, սուզելով ունկանոցը սառցախառը կամ
ձյունախառը պաղ ջրի մեջ: Մինչև ցույց արր-
ված աստիճան (37—40) պաղեցրած զտած կա-
թի մեջ (նույն անոթի մեջ) արկղիկից չոր մա-
կարդ՝ լաբորատորիայի պատրաստած ացիդո-
ֆիլինի մաքուր կուլտուրա յեն լցնում:

Փանորուքյաւն. —Ացիդոֆիլինի կուլտուրա-
յի բիոպրեպարատը (փոշի վիճակում) կարելի
յի ձեռք բերել հետեւյալ աեղերից.

Г. Куйбишево, Западно-сибирского края,
молочно-испытательная лаборатория.

Г. Вологда, ст. Молочная, сельскохоз-
яйственный институт.

Ленинград, Институт молочной промыш-
ленности.

Մակարդած՝ զտած կաթը յեռման ջրում
լվացած մուտովկայով լսվ խառնում են,
ունկանոցը մաքուր մառլայով ծածկում և հա-
սունանալու համար դնում են 37 աստիճան
ջերմություն ունեցող ջեռոցի (termostat) մեջ:

Ժանօրություն.—Ջեռոց չինելու դեպքում
մակարդը հասունանալու համար զտած կաթ
պարունակող ունկանոցը պետք է դնել տաք
ջուր լցրած մեծ անոթի մեջ, վորի ջերմությունը
զտած կաթի հասունացման ամբողջ ժամանակա-
ընթացքում շարունակ պետք է 37 աստիճանի
վրա պահպի:

Մակարդելուց հետո առաջին յերեք ժամվա-
րնթացքում յերեք անգամ (ժամը մեկ անգամ)
այնպես պետք է խառնել, վոր տակի մասի ել
խառնվի, վորից հետո հանգիստ թողնել մինչև
մակարդվելը: Մակարդվելը սովորաբար տեղի յե-
ռնենում 15—20 ժամ հետո: Ջերմաստիճանն
իջնելու դեպքում մակարդվելը դանդաղում—
ուշանում է:

Անհրաժեշտ է, վոր հասունանալու ժամա-
նակ ջերմաստիճանի սուր տատանումներ (իջե-
ցում, բարձրացում) չլինեն: Ջերմաստիճանի տա-
տանումները մակարդի վորակը խիստ գցում են:
Մակարդի հասունացման սկզբից մինչև վերջ
միապաղաղ ջերմաստիճան պահպանելը պարտա-

դիր և Զոտած կաթը մակարդվելուց հետո
ստացված ացիդոֆիլային մակարդը պաղեցնում
են մինչև Ցելսիուսի 9—10 աստիճան, վորից մա-
կարդածուի կոնսիստենցիան պնդանում ու պահ-
պանում են նրա լավ վորակը:

Խմորման տեսողությունը պահպանելու ժամ-
կետը լրանալուց հետո մակարդի վերին շերտը,
վորպես կողմանակի բակտերիաներով կեղտուփած
շերտ, 2—3 սանտիմետր հաստությամբ քաշում—
դեն են գյոււմ: Այնուհետև մակարդը խնամ-
քով խառնում են և ոգտագործում նոր մակարդ-
ներ պատրաստելու համար:

Պատրաստի մակարդի թթվությունը պետք
է լինի 90—100 աստիճանի սահմաններում,
ըստ Տերների: Մակարդի թե ամենաբարձր և թե
ամենացածր թթվություն ցանկալի չի: Մակար-
դի պատրաստ լինելը վորոշվում է արտաքին
տեսքով: Անոթը թեքելիս մակարդը պատերից
պետք է պոկվի առանց շիճուկ տալու: Համբ
պետք է լինի անարտ թթու, առանց ուրիշ հա-
մի, իսկ հոտը՝ պարզ կաթնաթթվային: Մինչև
կոտորելը մակարդը թանձր կոնսիստենցիա պետք
է ունենա, իսկ կոտորելուց հետո՝ թեթև ձգվող,
առանց լերդերի ու կտորների:

2. ԱՌԱՋԻՆ ՅԵՎ ՀԵՏԱԳԱ ԲՈԼՈՐ ՓՈԽՄԱԿԱՐԴՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Կուլառութայի ավելի մեծ կայունության հ
մաքրության համար, բացի մայրական մակար-
դից, կատարում են ևս յերկու անգամ կրկնվող
փոխմակարդում:

Մայր մակարդից պատրաստում են առա-
ջին փոխմակարդը, իսկ հետո՝ զբանից յերկրորդ
փոխմակարդը:

Փօխմակարդը կատարվում է հետեւյալ կերպ.

Հասունացած առաջին մայր մակարդից
վերցնում են 5 տոկոս և յերկրորդ ունկանոցի
մեջ մակարդում պաստերիզացման յենթարկած
4 լիտր գազած կաթ: Զտած կաթը վերցնում են
նույն վորակի և պաստերիզացման յենթարկում
նույն յեղանակով, ինչ առաջին դեպքում: Հետո
յերկրորդ ունկանոցից վերցրած 5 տոկոս մա-
կարդով մակարդում են յերրորդ ունկանոցի մի-
ջի պաստերիզացման յենթարկված զտած կաթը:

Այս ձեռով պատրաստվում են նաև բոլոր
հետագա մակարդները: Հանձնարարվում ե մի-
այն հետագա մակարդներում աստիճանաբար
պակսեցնել մակարդի տոկոսը, այն հասցնելով
մինչև 3-ի, վորպեսզի կուլտուրայի ակտիվու-
թյունն ավելի յերկար ժամանակ պահպանվի:

Փոխմակարդումների թիֆս ավելանալուն
զուգընթաց, պակսում ե մակարդը հասունա-
նալու ժամկետը (տևողությունը), 15—20 ժա-
մից իջնելով մինչև 5—6 ժամ։ Յերկու փոխ-
մակարդումից ստացված տեխնիկական մակարդը,
ի տարրերություն մայրական մակարդի, արդեն
գործ ե ածվում հորթերին և խոճկորներին
մնուցանելու նպատակով նախատեսված անարատ
և զտած կաթը մակարդելու համար։ մայրական
և առաջին փոխմակարդը խմբնելու համար չեն
գործադրում, քանի վոր ացիդոֆիլինի բակտե-
րիաների ակտիվությունը շատ փոքր է լինում։

Մակարդի փոխպատվաստումը պետք է
տեղի ունենա ամեն որ: Հորթերին խմբնելու
համար նախատեսված զտած կաթը մակարդելիս
շրդ և հետագա մակարդները չպետք է ամբող-
ջովին գործադրել, այլ մակարդվելիք զտած կաթի
5 տոկոսի չափ պետք է թողնել հետագա մա-
կարդները (հիմնական մակարդ) պատրաստելու
համար։

Այդ փոխմակարդումներն այնքան են կտ-
տարում, մինչև վոր մակարդն իր լավ վորակը
փոխի։ Մակարդի մեջ կողմնակի համ ու հոտ
յերեալը, հասունացման ժամկետի յերկարելը,
մակարդածուի թանձրության փոփոխությունը

(թուլությունն, ծակոտկենությունն և այլն) ցույց
են տալիս, վոր մակարդի մեջ կողմնակի բակ-
տերիաներ են ընկեր Այդպիսի մակարդը խո-
տանվում է և չի թույլատրվում գործադրելու
հենց վոր մակարդի վորակի փոխիստթյուն
նկատվի, ացիկոֆիլինի լաբորատորական մաքուր
կուլտուրայից մայր մակարդի նոր բաժին պետք
է պատրաստել կրկնելով վերը նկարագրված
ամբողջ պրոցեսը՝ Մակարդ պատրաստելու հա-
մար նկարագրված պրոցեսը բացատրենք որի-
նակով.

Եենթադրենք թե կերակրելու համար որա-
կան պահանջվում է 300 լիտր մակարդած՝ զբ-
տած կաթ (յեթե զտած կաթ քիչ է պահանջ-
վում, ուրեմն մակարդն ել, սկսած առաջին փոխ-
մակարդից, բացարձակապես քիչ կպահանջվի).
մակարդած՝ զտած կաթ պատրաստելու համար
հետեյալ կերպ են վարվում: Վերցնում են 4 լի-
տրը պատերիզացիայի յենթարկած՝ զտած կաթ
և պահպանելով վերը հիշված բոլոր կանոնները՝
մակարդում են ացիկոֆիլինի լաբորատորական
կուլտուրայի փոշով (մայրական մակարդ): Այդ
մակարդված՝ զտած կաթից վերցնում են 5 տո-
կոս, այսինքն՝ 200 լի և հետեյալ 4 լիտր պաս-
տերիզացված՝ զտած կաթը մակարդելու համար
(1-ին փոխմակարդ):

Առաջին փոխմակարդումից ստացված և
մակարդված՝ զտած կաթից վերցնում են արդեն
900 լի և և մակարդում 18 լիտր (18 լտրի 5 տո-
կոսը կլինի 900 լի և): Այս քանակից 15 լիտրը
դործադրվում ե ոգտագործվելիք զտած՝ կաթը
մակարդելու, իսկ 3 լիտրը թողնվում ե վորպես
պահեստի նյութ՝ հիմնական մակարդի համար
(2-րդ փոխմակարդում):

❖ ա ն ո ր ո ւ բ յ ո ւ ն . — Չորրո լիտր մայրական
և առաջին փոխմակարդի մնացորդներն արտա-
դրության մեջ չեն դործադրվում:

Յերկրորդ փոխմակարդումից ստացված 15
լիտր մակարդով մակարդում են 300 լիտր ոգ-
տագործվելիք անարատ կամ զտած կաթ, վորը
նախատեսված ե հորթերին խմցնելու համար
(15-ը կազմում ե 300-ի 5⁰/₀-ը):

5	1	մակարդ	100	1	դտած կաթ	մակարդելու	համար	առավոտյան
5	»	»	100	»	»	»	»	կեսորին
5	»	»	100	»	»	»	»	յերեկոյան

Ամեն մի մակարդումից թողնված մակարդը
(առավոտվա, կեսորվա և յերեկոյան) մի որ (24
ժամ) պահում են սառը՝ Յելսիուսի 9—10 ջեր-
մաստիճան ունեցող տեղ:

Յերկրորդ փոխմակարդման յերեք լիտր
պահեստի նյութից վերցնում են պահանջվող
քանակի զտած կաթի 5 տոկոս մակարդ և պառ-

տերիզացիայի յէնթարկած՝ զտած կաթից նորից
մոտ 16—18 լիտը հիմնական (մայր) մակարդ
պատրաստում։ Հետո, դրանից նորից հիմնական
մակարդի հետագա բաժին պատրաստելու համար,
յերեք լիտը պաշար թողնելով մնացած 15 լիտը
գործադրում են հորթերին սնելու նպատա-
կով նախատեսված անարատ կամ զտած կաթը
մակարդելու համար և այլն։

A 3972 Այս պլոցեսն այնքան ե կրկնվում, մինչև
վոր մակարդն իր լավ վորակը կորցնում ե։ Մա-
կարդի, փոխմակարդումների թիվը վորոշվում
ե նրա վորակով և հասունացման ուժով (արա-
գությամբ)։

963 Ժամկետը լրանալուն պես թե համի վորա-
կը կոնսիստենցիան փոխվելիս և թե ակ-
տիվությունը պակսելիս (մակարդելու արագու-
թյունն ընկնելիս) բանկայից վերցրած փոշու
ացիդոֆիլինի թարմ կուլտուրայից նորից պետք
ե մակարդ պատրաստել։

Հիմնական մակարդը պատրաստվում ե ամեն
որ՝ ոգտագործվելիք մակարդից առանձին, կուլ-
տուրայի հասունացման բացարձակ մաքրությու-
նը պահպանելու պայմաններում։ Ոգտագործվե-
լիք մակարդը պատրաստվում ե միայն հիմնա-
կանից։ Մեծ չափով անարատ կամ զտած կաթի

մակարդումը կատարվում ե վոչ թե հորթերին
խմբնելու համար հատկացված՝ մակարդված՝ զը-
տած կաթի մնացորդից, այլ միաժամանակ պատ-
րաստած փոքրաքանակ հիմնական մակարդից:

Մակարդումը կատարվում են մաքուր ամա-
նում:

3. ՀՈՐԹԵՐԻՆ 86Վ ԽՈՅԿՈՐՆԵՐԻՆ ԽՄՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՑԵՍՎԱԾ
ԱՆԱՐԱՏ 86Վ ԶՏԱԾ ԿԱԹԸ ՄԱԿԱՐԴԵԼԸ

Զտած կաթը մակարդելու համար մակարդը
վերցնում են՝ սկսած յերկրորդ և հետագա փոխ-
մակարդումներից: Զտած կաթը պետք ե մա-
կարդել մաքուր ամանում, կարելի յե կաթի ֆը-
լյագաներում, մեծ ունկանոցներում, բաքերում,
նայած պահանջվող զտած կաթի քանակին:

Զտած կաթի թթվությունը մակարդման
բուլեյին Տերների 16—19 աստիճանից բարձր
չպետք ե լինի: Զտած կաթը Ցելսիուսի 85—90
աստիճան ջերմությամբ 30 բուլե պաստերիզաց-
ման յենթարկելը պարտադիր ե, վորովինետե մա-
կարդելուց այն ավելի համեղ կեր ե դառնում
և, վոր ամենագլխավորն ե, կողմնակի բակաերիա-
ներից ավելի զերծ ե լինում: Պաստերիզացիա-
յից հետո զտած կաթը պաղեցնում են մինչև
Ցելսիուսի 37 աստիճան և մակարդում՝ պահելով
նույն ջերմաստիճանի տակ ամբողջ հասունաց-
ման ընթացքում:

Զտած կաթը մակարդելու համար ավելացնում են մակարդվող կաթի ծավալի 5 տոկոսի չափով մակարդ։ Որինակ՝ 50 լիտր զտած կաթ մակարդելու համար պահանջվում է $2^{1}/_2$ լիտր մակարդ։ Զտած կաթը մակարդելու ըովեյին, իսկ հետագայում առաջին յերեք ժամվա ընթացքում, մետաղե մաքուր մուտովկայով ժամը մեկ անգամ լավ խառնում են, իսկ այսուհետեւ հանդիսա թողնում մինչեւ հասունացումը։ Բոլոր պայմանները խիստ պահպանելիս զտած կաթը հասունանում է 12—16 ժամում, բայց այդ կարող ե և ավելի վաղ տեղի ունենալ։

Մակարդի տոկոսը մեծացնելով կարելի յե արագացնել մակարդվելու պրոցեսը, բայց այդ իշեցնում ե մակարդի ակտիվությունը, վորովհետեւ արագ բազմանալով՝ բակտերիաներն իրենք իրենց սպանում են կյանքի կենսագործունեյության արտադրանքներով։

Հենց ճիշտ այսպես ել ներգործում ե ջերմաստիճանի բարձրացումը հասունացման ժամանակ։

Պահանջվող նորմալ պայմանների պահպանումն ավելի յերկար ժամանակով ե պահում կուլտուրայի ակտիվությունն ու մաքրությունը։ Այսպիսով հորթերին որը յերեք անգամ

խմցնելու պեղքում, յեթէ զտած կաթը մակարդգվել է կեսորին, պատրաստ կլինի հետևյալ որն առավոտյան, յեթէ մակարդգվել է յերեկոյան, ուրեմն պատրաստ կլինի հետևյալ որը կեսորին: Կերակրելու համար զտած պատրաստի կաթը պետք է ունենա Տերների 90—100 աստիճանի թթվություն: Հասունացած ացիդոֆիլային (մակարդած) զտած կաթը կունենա թանձրուկի ամբողջական և հավասար թույլ ձգվող տեսք, համը՝ դուրեկան թթու: Բանկան, վորի մեջ զտնվում է ացիդոֆիլինի լաբորատորական մաքուր կուլտուրան, մինչև գործածելը պետք է պահել չոր, զով և մութ տեղ: Մտացված լաբորատոր-մաքուր կուլտուրան հանձնարարվում է դործածել նրա պատրաստման մոմենտից սկսած յերկու ամսից վոչ ուշ: Պիտանիության ժամկետը ցույց և տրված պիտակի վրա:

Մակարդի թթվությունն ըստ Տերների վորոշելու համար պետք է ունենալ Տերների սարք, վոր ներկայացնում է իրենից աստիճանային չափանոթ և պատվանդան: Մի բաժակով 10 խս մակարդ են վերցնում, 20 խս ջուր ավելացնում ու 2—3 կաթիլ 5 տոկոսյա ֆինոլֆտալեյին և տիտրացիայի յենթարկում՝ կաթիլ-կաթիլ ալկալու դեցի-նորմալ լուծույթ ավելացնելով:

Ծախսված ալկալու քանակը բազմապատկում են 10-ով։ Ստացված թիվը (արտադրյալը) արտայայտում է թթվության աստիճանն ըստ Տերների։

ՄԱԿԱՐԴԱԾ ԿԱԹՈՎ ՀՈՐԹ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Մակարդած՝ զտած կաթով հորթ կերակրելը պետք է կատարել խիստ անհատական կարգով։ Անհրաժեշտ է յուրաքանչյուր կերակրելու համար ունենալ թարմ պատրաստած՝ զտած կաթ։ Կերակրելուց առաջ մակարդած՝ զտած կաթի վերին շերտը $1\frac{1}{2}$ —2 սմ խորությամբ պետք է վերցնել և դեն զցել, հետո տակի մնացած մասսան լավ կոտորել, մետաղե խառնիչով խառնել և տաքացնել մոտավորապես 30—35. աստիճանն ըստ Ցելսիուսի, նայած հորթերի հասակին։

Տաքացնելու ժամանակ պետք է հսկել, վոր կաթը չկտրվի։ Ացիդոֆիլային լավորակ կաթը պրոֆիլակտիկ նպատակով կարելի յե տալ հորթերին, սկսած նրանց 5 որական հասակից (դալով կերակրելու շրջանի վերջում): Հորթերին ացիդոֆիլային կաթով պետք է կերակրել որական 4—5 անգամ՝ կաթով կերակրելուց մեկ ժամ առաջ։

Առաջին հինգ որը կարելի յե ամեն անգամ

տալ 100 իւ և ացիդոֆիլային կաթ։ Հետագա հինգ
որում՝ որական չորս անգամ՝ 150—200-ական
իւ և, իսկ հետագա 10 որը՝ որական յերեք սն-
գամ, ամեն անգամին 250—300 իւ և։

Ացիդոֆիլային կաթը տրվում ե կաթից
առանձին, կաթը կամ դալը՝ կերակրելուց $1 - 1\frac{1}{2}$
ժամ առաջ։

Ստամոքսի տեսական խանգարումների դեպ-
քում կաթը պետք ե բոլորովին հանել հորթերի
ռացիոնից և տալ բացառապես ացիդոֆիլային
կաթ։

20—25 որական և ավելի մեծահասակ հորթե-
րին, յերբ, կերակրման սխեմաների համաձայն,
արդեն սկսում են կերակրել նրանց զտած կա-
թով, ացիդոֆիլինով մակարդած՝ զտած կաթն
արդեն կարելի յե տալ վորպես կեր՝ ամեն ան-
գամ կերակրելիս 0,5-ական լիտր։ Այդ քանակն
աստիճանաբար մեծացնում են փոխարինելով
չմակարդած՝ զտած կաթը ացիդոֆիլինով մա-
կարդած՝ զտած կաթով։

Մակարդած՝ զտած կաթը պետք ե խմցնել
առանձին՝ հորթին կաթ խմցնելուց 1 ժամ առաջ։
Այսպիսով հորթը 21—25 որական հասա-
կից մակարդած, զտած կաթով կարելի յե կերակ-
րել ամբողջ կաթնային շրջանում այն չափով,

վոր նախատեսվում եւ թարմ զտած կաթի
նկատմամբ գոյություն ունեցող զոռտեխնիկական
կանոնների և սխեմաների համաձայն:

Սովորաբար հորթերը շատ արագ են ըն-
տելանում ացիդոֆիլինով մակարդած սերզատած
կաթին և միշտ ել իսկույն ախորժակով խմում
այն։ Ռացիոնում անարատ կաթի չափն աստի-
ճանաբար պակսեցնելով՝ անցնում են բացառա-
պես ացիդոֆիլինով մակարդած զտած կաթով
կերակրելուն։

Ռացիոնի մեջ զտած կաթի չափը պակսեց-
նելուն զուգընթաց, որական յերեք անգամ
խմցնելուց անցնում են յերկու անգամի՝ իսկ
հետագայում՝ կաթնային կերակրման շրջանի
վերջում՝ որական մեկ անգամ խմցնելու։

Համաձայն կերի սխեմայի, հորթերի համար
նախատեսված կերերի քանակը չպետք ե պակ-
սեցնել (առանձնապես խտացրած կերերը)։ Այդ
կերերը պետք ե տալ պահանջվող չափով ու
միայն լավ վորակի։

Մակարդված՝ զտած կաթով կերակրելու ժա-
մանակ պետք ե պահանջել ամանեղենի բացար-
ձակ մաքրություն։ Ամեն մի խմցնելուց հետո
հորթի դունչը մաքուր սրբիչով պետք ե սրբել։
Հորթապահների ձեռքերը, ինվենտարն ու խա-

լաթները պետք ե պահել ամենամաքուր զինակում։ Հորթերի խնամքի ու պահպանման վերաբերյալ բոլոր գոռտեխնիկական ու սանիտարական կանոնները պետք ե լրիվ պահպանվեն։

ԱՑԻԴՈՖԻԼԻՆՈՎ ՄԱԿԱՐԴՎԱԾ ԿԱԹՈՎ ԽՈՃԿՈՐ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Խոճկորներին կերակրելու համար հանձնարարվում ե անարատ կաթից պատրաստած ացիդոֆիլինը։ Ացիդոֆիլային կաթը վորպես կերմսոտավորապես յերկու անգամ ավելի սննդարար է ացիդոֆիլային գտած կաթից։

Անարատ կաթից ացիդոֆիլային մակարդը պատրաստվում ե նույնպես վերևում նկարագրված յեղանակով։

Խոճկորներին ացիդոֆիլային կաթով կարելի յե կերակրել 5—7 որական հասակից։

Խոճկորներին ացիդոֆիլինի սովորեցնում են փոքր բաժիններով, սկսած (որական 30—50 դրամ)։

10—15 որական հասակում տալիս են 100 դրամ


16—20	»	»	»	»	200	»
21—30	»	»	»	»	300	»
31—40	»	»	»	»	450	»
41—50	»	»	»	»	600	»
51—60	»	»	»	»	800	»
61—70	»	»	»	»	1000	»

Ացիդոֆիլային կաթը տալիս են ռբուկան
 3-4 անգամ, թարմ կաթից տռանձին։ Մատղաշ
 և թույլ խոճկորներին պետք է տալ ացիդոֆի-
 լային անարատ կաթ, ավելի մեծերին՝ ացիդո-
 ֆիլային զտած կաթ։ Խոճկորներին սկզբում կե-
 րակրում են ացիդոֆիլային կաթը լցնելով եմա-
 լապատ փոքր կոնքերի մեջ, իսկ հետո՝ տաշ-
 տակների։ Փորլուծով հիվանդ խոճկորներին մին-
 չե առողջանալը, մայրական կաթից ու ացիդո-
 ֆիլային կաթից բացի, ուրիշ բան չպետք է տալ։
 Խոճկորներին կյանքի առաջին որերին փորլու-
 ծից պաշտպանելու համար անհրաժեշտ է մե-
 րուններին ծնելուց մեկ որ առաջ և ծնելուց
 հետո մի քանի որ, որոկան 1-2 լորի չափով,
 լրացուցիչ կերպով ացիդոֆիլային զտած կաթ
 տալ։

Խոճկորների գարզացման և տճման վրա
 ացիդոֆիլային կաթը շատ բարենպաստ ազդե-
 ցություն և գործում։



卷之三



Պատու խմբ.՝ Ա. Թաղեգոսյան
Տեխ. խմբ.՝ Խ. Այվազյան
Մըբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբադրիչ՝ Խ. Այվազյան
Գլավվիտի լիազոր հրատ 442, պատվ. 536, տիրած 1500
Հանձնված և արտադրության. 14 հունիսի 1937 թ.
Սառարարված և տպելու 13 հուլիսի 1937 թ.
Քառորդ հրատի տպարան, Ենքնան, Նալբանդյան 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038815

[054]
МРСБ 20 №.

350

A 1
3977



Временная инструкция по приготовлению и скармливанию
свеженного ацидофилином молока и обрата телятам
и поросятам

(Брэз. 1940)

Сельхозгиз

1937

Ереван

Прес